ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Վ Ա Յ Ո Ց Ձ Ո Ր Ի
Մ Ա Ր Զ Պ Ե Տ

ք. Եղեգնաձոր, Շահումյան 5 **Հեռ. (374010) 287401, (3740281) 2 25 22**

_____,, ,,_____,, 2017թ N _____ **Ֆաքս (374010) 28 18 32**

ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ

ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՆԱԽԱԳԱՀ

ՊԱՐՈՆ Ա. ՍԱՔՈՒՆՑԻՆ

Հարգելի պարոն Սաքունց

Ի պատասխան Ձեր 06.02.2017թ. Ե/2017-06.02/68 գրության՝ 2014թ. ապրիլի 17-ին ՀՀ կառավարության կողմից հաստատված հոգեկան առողջության պահպանման և բարելավման 2014-2019թթ. ռազմավարությունն ու ռազմավարության կատարումն ապահովող միջոցառումների կատարման վերաբերյալ, հայտնում ենք.

- Շուրջօրյա խնամքի կարիք չունեցող հիվանդները հաշվառված են Եղեգնաձորի բժշկական կենտրոնի և Վայքի բուժական միավորման հոգեբուժական կաբինետներում, գտնվում են դիսպանսեր հսկողության տակ, անհրաժեշտության դեպքում հոգեթերապևտի և բոլոր նեղ մասնագետների կողմից ստանում են բժշկական հետազոտություններ և օգնություն:
- Մարզի 6 հանրակրթական դպրոցներում գործում են ներառական կրթություն, որտեղ հաճախում են 127 երեխաներ:
- Մարզպետարանում և համայնքներում, հասարակական կազմակերպությունների հետ համատեղ, պարբերաբար աշխատանքներ են տարվում հաշմանդամություն ունեցող անձանց հասարակությանը ինտեգրելու, նրանց զբաղվածության խնդիրները լուծելու հարցում:

Մարզում հոգեբուժական հաստատություն ունենալը արդիական է, որի համար հարց է բարձրացվել ՀՀ առողջապահության և ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություններում:

Հարգանքով՝ **Հ.ՍԱՐԳՍՅԱՆ**

Կատարող՝ առոջապահության և սոցիալական
ապահովության վարչություն Հեռ. 060 71 20 97